

ՀՀ Սփյուռքի նախարար
Տիկին Հրանուշ Հակոբյանին
ՀՀ Սփյուռքի նախարարություն
Վազգեն Մարգարյան 26/1
Երևան, Հայաստան

29-ր հունիսի, 2011թ.

Հարգելի տիկին Հակոբյան,

Թույլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ հունիսի 16-ի 02/05.1/1366.16 նամակի համար, որն ինձ տեղեկացրեց այն մասին, որ Պետական եկամուտների կոմիտեն վերջապես բավարարեց իմ անձնական իրերի ներմուծման դիմումը՝ համաձայն 105-րդ հոդվածի:

Ես բարձր եմ գնահատում այս ամբողջ ժամանակահատվածում Ձեր անձնակազմի կողմից ցուցաբերած օգնությունն ու աջակցությունը:

105-րդ հոդվածն այնքան էլ պարզ չէ, ինչը Պետական եկամուտների կոմիտեի կողմից իմ առաջին դիմումի մերժման պատճառ հանդիսացավ: Ես քաջատեղյակ եմ, որ Ձեր անձնական ջանքերը հանգեցրել են օրենքի պարզաբանմանը և կատարությունը հանել է քաղաքացիության համար դիմած անձանց համար պարտադիր գրանցման պայմանը:

Այնուամենայնիվ դուք տեղյակ եք, որ ավելի քան երկու հազար սփյուռքահայեր ստացան իրենց քաղաքացիությունը պարտադիր գրանցմամբ, և այն պահին, երբ որոշ են վերադառնալ Հայաստան, նրանք Պետական եկամուտների կոմիտեում կհանդիպեն նույն խնդիրներին, ինչ ես:

Ես առաջինն էի և կցանկանայի լինել վերջինը, ուստի խնդրում եմ Ձեր իրավաբանների աջակցությունը Ազգային Ժողովի միջոցով օրենքը պարզաբանելու և անհրաժեշտության դեպքում այն փոփոխելու համար: Ես անձնապես պատրաստ եմ ժամանակ տրամադրել և աշխատել ձեր իրավաբանների հետ:

Մեկ անգամ ևս ցանկանում եմ հայտնել իմ խորին շնորհակալությունը և մաղթել Ձեզ մեծամեծ հաջողություններ:

Խորին հարգանքներով՝



Ջորջ Տարգսյան

9 Ալեք Մանուկյան

Ք. Երևան

094.526984

